№ 6 ԵՐԵՔՇԱԲԹ ՅՈՒՆՎԱՐԻ 18 1894 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 18 № 6

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԻՆՉՈՒՄՆ Է ԳԱՂՏՆԻՔԸ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Новое Время» լրագրի յօդուածի առիթով. Երկու խօսք ուսուցչական ցէնզի մասին. Նամակ Բագուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սերբիական գործերը: Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Գերմանիայից.

ԻՆՉՈՒՄՆ Է ԳԱՂՏՆԻՔԸ

Վերջին ժամանակներս խաւարամիտների բանակում մի մեծ իրարանցում է տեղի ունենում: Նրանք տեսնելով, որ իրանց վարկը օրից օր ընկնում է և նրան բարձրացնելու համար գործ դրած բոլոր միջոցները անզօր են յայտնվում,—մի տեսակ յուսահատութեան մէջ են: Նրանք չը գիտեն, թէ ինչ անեն. պատէպատ են ընկնում, միջից կէս են լինում, որպէս զի մի կերպ իրանց կողմը պահեն հասարակական հաւաքը. բայց աճող գիտակցութիւնը օր ըստ օրէ իր նուաճումները աւելացնում է և անխնայ հարուածներ է պատրաստում մառաւոր և բարոյական անանկների համար:

Նրանք, կարծելով թէ աջողութեան բոլոր գաղտնիքը լոկ բառերի մէջն է և տեսնելով, որ իրանց ասածները և գրածները այլ ևս զօրութիւն չունեն մարդկանց գրաւելու, սկսել են կրկնել ուրիշների խօսքերը, բառերը և նախադասութիւնները այն յոյսով, թէ հասարակութիւնը կը խաբվի իսկոյն այդ բառերից և ովսաննաներ կանչելով կը վազէ նրանց արտասանողների ետևից:

Նրանք ամեն տեսակ նշանակութիւն ունեցող խօսքեր են արտասանում: և ազատամիտ ու պահպանողական, և առաջադէմ ու յետադէմ, և լուսամիտ ու խաւարամիտ—այն ենթադրութեամբ՝ թէ ինչպէս առևտրականի խանութում կայ ամեն տեսակի և մօդայի ապրանք, այնպէս էլ այստեղ կարելի է առաջարկել ցանկացողների ընտրութեան—ով ինչ ուզում է՝ վերցնէ և գնայ:

Բայց նրանք զարմացած և շուարված տեսնում են, որ իրանց հաշիւը սխալ է դուրս գալիս: Հասարակութիւնը կամաց-կամաց համոզվելով, որ այստեղ կատարվում է ուղղութիւնների, գաղափարների, հասարակական խնդիրների մի սարսափելի խառնուրդ, լուրջ գործի սոսկ առևտուր, երեսը դարձնում է այդ հրապարակական չարչիներից, այլ ևս չը կամենալով լսել նրանց նոր տեսակի բ ե կ լ ա մ ն ե ր ը:

Ի՞նչ կարող են ազդել այդտեղ ձեր նոր բառերը: Եթէ իսկապէս խնդիրը կախված լինէր միայն բառերից, այն ժամանակ հասարակութեան ուշադրութիւնը և համակրանքը ամեն մարդ կարող կը լինէր ամենայն օր փոխել, ըստ իր հաճոյքի, թեքել այս ու այն կողմ անվերջ կերպով:

Սակայն, բարեբաղդաբար, այդպէս չէ բանը: Այդտեղ մի մեծ հիմնական պայման կայ, որ և կազմում է գործի հաստատ աջողութեան գաղտնիքը: Ահա, եթէ կարող էք այդ պայմանը կատարել, այն ժամանակ առաջ անցէք, ցերը ձեզ հետ: Որչափ և զգալի լինեն ձեր ժամանակաւոր զրկանքները, անշուշտ մի քանի տարուց յետոյ կը գրաւէք հասարակութեան լաւագոյն մասի համակրութիւնը և կը դառնաք նրա սրտի հաւատարմատարը:

Այդ պայմանն այն է, որ դուք նորից ծնվէք, իբրև բարոյական անձնաւորութիւններ և այնուհետև ձեռնամուխ լինէք հասարակական գործունէութեան:

Գաղտնիքը—ազնիւ, շիտակ և անկեղծ գործունէութեան մէջն է: Գաղտնիքը մարդու բառերի, ճառերի և նրանց ընդհանուր գործունէութեան ներդաշնակութեան մէջն է: Երբ չը կայ այդ ներդաշնակութիւնը, երբ ձեր արտասանած մի բառին չէ համապատասխանում միւսը, կամ ձեր առաջադրած դրօշակին հակասում է գործը, այն ժամանակ՝ ձեր բառերը, որչափ և դրաւիչ լինեն իրանց մէջ պարունակած մտքով—անզօր են ազդելու մարդկանց վրա: Դուք կարող էք գուցէ ժամանակաւորապէս խաբել մարդկանց, բայց յետոյ կը մերկանաք և կը խայտառակվէք սաստկապէս:

Միթէ՞ կարծում էք թէ երէկվայ ձեր ասածը ուրանալով, աջ ու ձախ զրպարտութիւններ ցրվելով, անվերջ ծամածռութիւններ անելով, ծրագրի և ուղղութեան անունով՝ ծրագիր և ուղղութիւններ ոտի տակ տալով, իսկ վերջում անմեղ դառ ձևանալով—կարելի է երկար ժամանակ մարդկանց խաբել:

Կրեցէք ձեր պատիժը:

Երբ մարդ զրկանքներ է կրում յայտնի գաղափարների, սկզբունքների պաշտպանութեան համար, նա զոհ է միայն ժամանակակից ագիտութեան: Իսկ երբ մարդ ոչ մի բան չունի ասելու հասարակութեան, տարիներ անցնելուց յետոյ չէ կարողանում յիշել ինչ է նա ասել, պաշտպանել, սիրել, գովել և դուրս է վռնդվում ասպարէզից միայն այն պատճառով, որ նա աններելի հանաքներ է անում հասարակութեան լուրջ շահերի հետ,—նա զոհ չէ, այլ միայն կրում է իր արժանի պատիժը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«НОВОЕ ВРЕМЯ» ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ.

«Новое Время» լրագիրը, հիմնվելով Բաթումի չրջանի գործերի մասին գրված մի մեծ թղթակցութեան վրա, հարցնում է թէ միթէ՞ ճիշդ է, որ տեղացի ծառայողները սիստեմատիկաբար դիմադրութիւն են անում ռուս տարրի տարածվելուն և եզրափակում է այսպէս.—եթէ այդ ճիշդ է, այն ժամանակ պէտք է տեղական տարրը դուրս քշել ծառայութիւնից և նրան ուղարկել Ռուսաստանի միջին նահանգները:

Բայց նախ և առաջ պէտք է քննել այն հարցը, որ դնում է լրագիրը: Արդեօք ճիշդ է, որ ռուս տարրի տարածվելուն արգելք են եղել դիտմամբ տեղական պաշտօնեաները:

Մենք կարդացինք Բաթումի մասին մեծ թղթակցութիւնը ամենաուշադիր կերպով և զարմացանք այն եզրակացութեան վրա, որ դուրս է բերված պատմված իրողութիւններից: Թղթակցութեան մէջ նկարագրված են մի շարք տխուր անցքեր, որ տեղի են ունեցել Բաթումի չրջանում. բայց նրանց մէջ չէ երևում այն դոյնը, այն տենդենցիան, որի մասին խօսում են թէ թղթակցութիւնը և թէ լրագիրը: Այդ անցքերի մէջ, եթէ ճիշդ են նկարագրված նրանք, դեր են խաղում մարդկանց ագահութիւնը, չարագործութիւնը, սահմանափակ մտածողութիւնը և ձեական վերաբերմունքը դէպի կեանքի երևոյթները, բայց ոչ սիստեմատիկական կռիւ յայտնի տենդենցիայով: Իսկ մի հանգամանք մեզ բոլորովին զարմացնում է թղթակցութեան մէջ, այն է, որ գանձարանի (казна) շահերը և իրաւունքները այնտեղ հակադրված են ռուսական շահերին: Արքունական կալուածքների կառավարութիւնը թոյլ չէ տուել, որ արքունական հողերը ընկնեն մասնաւոր անձանց ձեռքը և այդպէս գործելը նրա պաշտօնեաների

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Լէյպցիգ, յունվարի 2-ին

Երեք ամիս Լէյպցիգի հասարակութեանը անհամբեր սպասել տալուց յետոյ, վերջապէս, դեկտեմբերի 29-ին (յունվարի 9-ին) քաղաքս ժամանեց իր խմբի հետ միասին հռչակաւոր իտալացի դերասանուհի տիկին Էլէօնօրա Դուզէ, և հետևեալ օրը դուրս եկաւ բեմ, Դիւմայի յայտնի «Կամելիազարդ տիկին» պիէսայի մէջ, Մարգարիտ Գոտիէի պատասխանատու դերում:

Չը նայելով որ տիկին Դուզէ երեք տարի է, որ թողնելով Իտալիան, եւրոպական նշանաւոր բեմերի վրա է դուրս գալիս, սակայն այս կարճ ժամանակամիջոցում նա, շնորհիւ իր արտասովոր տաղանդի՝ մի այնպիսի հռչակ և ընդունելութիւն է գտել, որի նմանը բեմական պատմութեան մէջ շատ հազուագիւտ է գտնել:

Ահա նա. 34 տարեկան, միջին հասակով, նիհար, մաշված դէմքով և մարմնով, ծանր, ծոյլ շարժուածքներով, սև հրաշալի երկայն մազերով: Մաշված դէմքով... Բայց նայեցէք այդ դէմքին, այդտեղ ահա կենտրոնացած է այն դիւթական ոյժը, այն կախարդիչ թալիսմանը, որով նա գրաւում, յափշտակում է թէ ծերին, թէ երիտասարդին, թէ պատանուն, թէ մանուկին: Այդ թարշամած դէմքի վրա են նրա սեռակ, չոյիչ, անմոռան աչքերը, երկայն սև արտևանունքների շրջանակի մէջ, կամարակապ քնքոյշ յօնքերով զարդարված: Այդ աչքերը... Մերթ հանդիստ, խաղաղ, մինչև անգամ սառը. մերթ կրակոտ, բացավառված. մերթ թախծալից, խորը վշտով լի. մերթ նախանձի թոյնով, բարկութեան չանթով, փայլող՝ մերթ սիրոյ քնքշութեամբ, հաւատարմութեան ժպիտով ծորված. մերթ մանկական անմեղութեամբ, հրեշտակային պարզութեամբ, անկեղծութեամբ շղարշած այդ աչքերը—ահա Էլէօնարա Դուզէի տաղանդի, ոյժի գաղտնիքը. իսկ աչքերի հետ նրա բերանը, շրթունքները, այդ զգայուն, թըրթռուն, առաձգական շրթունքները և նրա տակից հեղ, պարզ կանացիականութեամբ լի ձայնը, իտալական, երաժշտականութեան հասած, գողտրիկ լեզուի բառերով, որոնք գիտեն ամենասերտ համերաշխութեան մէջ մտնել աչքերի արտայայտութեան հետ, դէմքի իւրաքանչիւր մի անչնչաշարժուածքների հետ, իսկ սրանք բոլորն էլ սրտի, Դուզէի տաղանդի այդ անչէջ վառարանի հետ: Որքան համերաշխ, ներդաշնակ են այդ բոլորը միմեանց հետ, որքան սերտ միացած են դրանք Դուզէի ողջ էութեան մէջ:

Դուզէն գեղեցիկ չէ. նրա դէմքի գծերը անկանոն են, սակայն նա կարող է իր աչքերին, բերանին, դէմքի ջղերին այնպէս շարժում, ձև տալ, որ նա ձեր աչքին կը ներկայանայ որպէս մի կատարեալ գեղեցկուհի. նա կարող է տգեղանալ, այլանդակվել, նա կարող է դէր, լի դառնալ. նա կարող է բարձր հասակ ընդունել, իշխանուհու արքայական վեհութիւն և փարթամութիւն ստանալ, նա կարող է փոքրանալ, կծկվել, նիհարանալ, մի կատարեալ ճիւաղի նմանվել. մի խօսքով նա կարող է դառնալ այն, ինչ որ ցանկանում է. ահա Դուզէի մեծ տաղանդի էութիւնը, նրա արուեստի հրաշալիութիւնը:

Նայեցէք նրա վրա «Կամելիազարդ տիկին» պիէսայի երկրորդ գործողութեան մէջ, երբ նա՝ Մարգարիտ Գոտիէն, իր սիրած Արմանին տուն ուղարկելուց յետոյ, իր «փողի քսակ» գրագի մօտ նըստած՝ նրանից փող է խնդրում. նայեցէք այդ դէմքին. այտերը դեռ ևս վառվում են Արմանի հետ ունեցած սիրային բացատրութիւնից յետոյ, նրա ողջ արտայայտութիւնից ինքնաբաւականութիւն և երջանկութիւն է բուրում, աչքերը փայլում են մի զմայլեցուցիչ լուսով: Մանում է ծառան և նրան մի նամակ յանձնում: Ահա, Արմանից. վրա է պրծնում և ճըղճղում նամակը ու կարդում: Նայեցէք այդ դէմքին, այդ գծերին, որպէս նա փոփոխվում է, որպիսի նիւանսներ են յաջորդում միմեանց: Կարդաց, գլուխը բարձրացնում է. ոհ, որքան փոխվեց այդ դէմքը. նա այժմ գունատվել է որպէս մի մեռեալ, այդ մի րոպէ առաջ բաղդաւոր աչքերը մարեցին. այժմ առաջդ կանգնած է ջարդված, փշրված, յուսաբեկ, անբաղդ Մարգարիտը, և այդ բոլորը մի ակնթարթում, մի ճակատագրական նամակի ազդեցութեան տակ: Նա դողդողալով բարձրացնում է իր աջ ձեռքը, տանում ճակատին, շարժում մազերը, և սրտիցը մի «ահ» դուրս ժայթքում. ախ այդ ահը, դա մի ամբողջ դրամա է, մի հնչիւն, որ եթէ անալիզի ենթարկենք, հարիւրաւոր մասերի կը վերլուծենք: Նա սկսում է ապա խաղալ, հանգիստ մարդ դալ սենեակում. լուռ է ամեն ինչ. հաղարաւոր հասարակութիւնը մի սիրտ, մի հոգի, մի զգացմունք դարձած՝ սեռեռել է իր աչքերը անկիւնից անկիւն ընկնող անբաղդ կնոջ դէմքի վրա. յանկարծ նա անում է մի քանի ինստինկտիւ, անգիտակցական շարժումներ և թուլացած ընկնում գահաւորակի վրա, երեսը փակում... Անմոռան է այս պատկերը:

Դուզէն այն աստիճան տարվում է իր դերով, իր հերոսուհու հոգեկան վիճակով, որ նրա աչքերը սկսում են խոնաւանալ և ահա մէկ էլ տեսնես՝ արտասուքի մարգարիտները միմեանց ետևից դուրս են թափվում նրա աչքերի աղբիւրակներից և ցողում նրա երեսը: Ընթերցող, տեսել էք դուք անկեղծ սիրոյ ցաւից արտասվող մի կնոջ, դիտել էք այդ դէմքը, այդ վսեմ դէմքը անբաղդութեան բոպէներում. այդ դէմքը սրբագործվում է, նա մի ոյժ և իրաւունք է ստանում, որի առջև ոչ մի ճշմարիտ մարդկային սիրտ դիմանալ չէ կարող. վեհ է այդ պատկերը, իսկ այդ վեհութեան ըզգացմունքը ներշնչեց և վայելել տուեց մեզ Դուզէն մի քանի անգամ...

Ինչով բացատրել Դուզէի խաղի գաղտնիքը.—բնականութեամբ: Դուզէն մի տաղանդաւոր նատուրալիստ է, այս բառիս ազնիւ և գեղարուեստական նշանակութեամբ: Ամեն մի շարժում, ամեն մի քայլ, ամեն մի հնչիւն նրանում բնական է. նա չունի բեմական պաֆոս, դերասանական շաբլոն, արուեստական արտայայտութեան ձևեր. նա էֆէկտների ետևից չէ ընկնում, նրա համար չը կայ բեմ, թատրոն, հասարակութիւն, ծափահարութիւն: Երբ նա խաղում է՝ նա մարմնացած է այն անձնաւորութեան մէջ, որի դերը կատարում է, նա ապրում է հերոսուհու ներքին կեանքով, նա զգում է, իր մարմնի, արեան, ջղերի վրա է վերցնում այն բոլոր վշտերը, այն բոլոր կսկիծները, ուրախութիւնները, տանջանքները, որոնց մէջ հեղինակը դրել է Մարգարիտ Գոտիէին, Նորայի Մարիային, Սանտուցային, Կլէօպատրային:

Մենք տեսել ենք «Կամելիազարդ տիկնոջ» դերում երկու նշանաւոր դերասանուհիներ, որոնք Բերլինի կայսերական թատրոնում խաղում են: Ո՛րքան տարբերութիւն: Այն ինչ այդ դերասանուհիների ողջ գործողութիւններից երևում էր, որ դրանք բեմի վրա միշտ մտածում են թատրոնական դահլիճի հասարակութեան վրա ազդեցութիւն թողնելու և այդ պատճառով չափազանցնում են դերը, տիպը, արտայայտութիւնը, Դուզէին մի բան է զբաղեցնում. իր սեփական դրութիւնը, իր վիճակը, իր միտքը, որից և դուրս է գալիս նրա շարժումների ազատութիւնը, խաղի բնականութիւնը, որով և գրաւում է հասարակութեան համակրութիւնը, նրա զգացմունքները միացնում իր հետ, իր տանջանքի, կասկածի, բարկութեան, նպատակի, հիւանդութեան հետ:

անմիջական պարտաւորութիւն է։ Բայց եկ տես, որ այդ բանը անսպասելի դոյնով նկարված է միայն այն պատճառով, որ այդ մասնաւոր անձինք այս դէպքում վայելում են համակրութիւն ուրիշ տեսակէտից։ Բայց մի՞թէ դժուար էր ուղիղ խնդիր յարուցանել այն բանի մասին, թէ ի՞նչպէս պէտք է արքունական կալուածքների կառավարութիւնը վարվի, երբ արքունական հողի վրա նստել են կուլտուրա բերող, կուլտուրա մոցնող անձինք, որոնց լինելը և գործելը ցանկալի է երկրի առաջադիմութեան համար։ Միթէ թղթակիցը կարծում է, որ արքունական կալուածքների կառավարիչը, եթէ լինէր ոչ թէ Գամբեկելովը և նրա պաշտօնեայ Աբարաձէն, այլ ծագումով ռուս անձինք, նրանք կը վարվէին այլ կերպ, քան վարվել են վերոյիշեալները։ Կարող ենք հաւատացնել, որ այդ փոփոխութեամբ ոչինչ զանազանութիւն չէր լինի Նրանց վերաբերմունքի մէջ դէպի գործը։ Այդտեղի կալուածքների մինիստրութեան իրաւունքների խնդիր կայ, որի պաշտպաններն են հանդիսանում Գամբեկելովը իր պաշտօնեաներով։

Ապացուցէք, որ այդ կառավարութիւնը նեղ, սխալ է հասկանում տէրութեան շահերը, փոխել տուէք պետական օրէնքը բարձր իշխանութեան ձեռքով, բայց քանի օրէնքը կայ, պաշտօնեաները պարտաւոր են նրան կատարել։

Ինչ վերաբերում է լրագրի այն խօսքին, թէ կովկասցիները պէտք է լաւ յիշեն, որ Կովկասի մուտքը պակաս է նրա վրա արած ծախսից—բոլորովին անտեղի է։ Ինչ կապ կայ Կովկասի արդիւնաբերութեան և կովկասցիների յարաբերութեան մէջ դէպի տէրութիւնը։ Նախ սխալ է թէ Կովկասի մուտքը պակաս է նրա ծախսից, իսկ երկրորդ՝ եթէ այդ մուտքը լինէր երկպատիկ, եռապատիկ—դա չը պէտք է հիմք լինէր կովկասցու այս կամ այն տեսակ վերաբերութեան դէպի տէրութիւնը։

Կովկասցիները բազմաթիւ առիթներ են տուել տէրութեան համոզվելու, որ նրանց հաւատարմութեան զգացմունքի մէջ տեղի չեն ունեցել այն տեսակ մտրիվներ, ինչպիսին է Կովկասի համեմատական արդիւնաբերութիւնը։

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՅԷՆՉԻ ՄԱՍԻՆ

Ուրախութեամբ տեսնում ենք, որ վերջապէս սկսել են մտածել ուսուցչական ցէնզի մասին։ Մեզ՝ ուսուցիչներիս տրվելու է միջոց պատրաստվելու, ընակարան, ուսուցիչ, գուցէ և կերակուր. բայց այս բոլորը դեռ բաւական չէ ցէնզ ձեռք բերելու համար. հարկաւոր է տոկունութիւն. բացի դրանից, մի քիչ էլ մենք պատրաստականութիւն պէտք է յայտնենք քննութիւն տալու։ Ամառվայ երեք ամիսը շատ քիչ է պատրաստվելու և ցէնզ ձեռք բերելու համար, իսկ ժամանակը չէ ուղում սպասել։

«Մշակի» անցեալ համարներից մէկում մեզ՝ ուսուցիչներիս մեղադրում են, որ չենք հոգում ցէնզի համար. այդ բոլորովին ճիշդ է. բայց միթէ այստեղ աւելի մեղաւոր չէ հանդիսանում մեր ուսումնարանական վարչութիւնը, որ մինչև այսօր դէթ մի անգամ չը բարեհաճեց յայտնել մեզ ցէնզի խնդրի մասին և մինչև օրս մեզ համար անորոշ մնաց, թէ այդպիսի քննութեան պիտի ենթարկվեն, 1884 թուից, 89 թուից, թէ՞ 94 թուից յետոյ աւարտողները, թէ բոլոր հայ սեմինարիստները. կրօնի և հայոց լեզուի ուսուցիչները ազատ են մնում քննութիւնից, թէ նրանք ևս պիտի ենթարկվեն այդ քննութեան։ Բայց գուցէ և ուսումնարանական վարչութեան համար մութ են այդ կէտերը։ Ցանկալի է, որ այդ հարցերը պարզվեն։

Թէ այսպէս, թէ այնպէս, ինչպէս երևում է, պէտք է պատրաստվենք և քննութիւն տանք։ Ի՞նչ է պահանջվում քննողից։ Աչքի առաջ ունենալով, որ շատ գիւղական ուսուցիչներ դեռ որոշ տեղեկութիւն չունեն ցէնզի մասին, թոյլ ենք տալիս մեզ մի երկու խօսք ասել նրա վերաբերութեամբ։

Պահանջվող ուսուցչական կոչումը երկու տեսակ է—գիւղական ծխական ուսուցչի կամ միդասեանի (Званіе сельскаго приходскаго или одноклассного) և քաղաքային ծխականի կամ երկդասեանի (Званіе городскаго приходскаго или двухклассного)։ Առաջին կոչման համար պահանջվում է ուսուցիչներից 1. ռուսաց լեզու (քերականութիւնից գլխաւորապէս ստուգաբանութիւն — этимологія, իսկ համաձայնութիւնից—синтаксисъ —նախադասութիւնների տեսակները միայն և նրանց համառօտ վերլուծումը)։ 2. Թուաբանութիւն (մինչև տասնորդական կոտորակների վերջը և պարզ երորդական կանոնները)։ 3. Ռուսաց պատմութիւն (մի քանի ընդհանուր տեղեկութիւններ)։

Երկրորդ կոչման համար. 1) ռուսաց լեզու (քերականութիւնից ամբողջ ստուգաբանութիւնը և համաձայնութիւնը), 2. Թուաբանութիւն (ամբողջովին), 3. ռուսաց պատմութիւն և Ռուսաստանի աշխարհագրութիւն (ամբողջապէս)։ Թէ առաջին և թէ երկրորդ կոչման համար պէտք է տալ մի մի փորձնական դաս ռուսերէնից և թուաբանութիւնից. առաջին կոչման համար, միդասեան ուսումնարանի ծաւալով, երկրորդի համար երկդասեանի. փորձնական դասերի համար պատրաստվելու ժամանակ է տրվում մի կամ աւելի օր։

Քննութիւն տուողները պէտք է ներկայացնեն ծննդեան, վարքի և հարկի ազատութեան վկայականներ։ Քննութիւն կարելի է տալ սեպտեմբերի 1-ից մինչև 1-ն մայիսի Կովկասեան շրջանի հոգաբարձու պ. Եանօվսկու դիւանատանը, գիմնազիաներում, ինստիտուտներում, ուսուցչական սեմինարիաներում և քաղաքային ուսումնարաններում։

Ասեցինք, որ երեք ամիսը շատ քիչ է պատրաստվելու համար. ուրեմն թող ցանկացողը այժմեանից սկսի պատրաստվել, սովորել, բայց լուրջ։ Այս դէպքում վարանելը ամօթ է մինչև անգամ։ Հայ ուսուցիչը պիտի ապացուցանէ, որ այդ քննութիւնը իսկապէս շատ հնչին է իր համար։

Եւ միթէ միջնակարգ ուսում ստացած մի մարդ դժուարութիւն պէտք է զգայ ուսուցչի այսպիսի մի փոքրածաւալ քննութիւն բռնելու համար։ Մեզանից առարկաներ չեն պահանջվում, այլ լեզու, իսկ նրան սովորելու համար հարկաւոր է միայն կամք, աշխատութիւն և համբերութիւն։

***

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յունվարի* 10-ին

Մեր դումայի արկածներով յայտնի դահլիճում տեղի ունեցաւ մի «ինցիդէնտ» ևս։ Ամսիս 3-ին նորընտիր քաղաքագլուխ պ. Քր. Անտոնեանի նախագահութեամբ տեղի ունեցած նիստի ընդհատման միջոցին. ձայնաւորներից պ. պ. Իրեցկու և Մ. Ռնանեանի մէջ անբաւականութիւն է ծագում, որին և հետևում է վիրաւորանք։ Իրեցկին թողնում է դահլիճը և դուրս գնում։

Այդ ինքն ըստ ինքեան անմեղ դէպքը հասարակութեան զանազան շրջանակներում այնպէս է բացատրվում, որպէս թէ բոլոր հայ ձայնաւորները, իրանց նախագահով հանդերձ, համամիտ են եղած պ. Ռնանեանի հետ։ Եւ այդ երևակայական համերաշխութեան հիմքը տեսնել են ուղում հայութեան, ազգայնութեան մէջ...

Որպէս նմուշ և արձագանք այդ տեսակ նախապաշարված կարծիքների, կարող է ծառայել հետևեալը։ Իրաւաբան Բ. Բոմանով, պ. Իրեցկուն «Каспій» լրագրի էջերում ուղղած բաց նամակի մէջ յայտնելով իր անկեղծ ցաւակցութիւնը նրա կրած վիրաւորանքի համար, ասում է. «Ինչպէս ռուս, որի համար թանգ է ռուսի պատիւը, ռուսի անունը և շահը, ես չտապում եմ դիմել նամակովս ձեզ՝ հաւատացնելու համար, թէ դումայի մէջ ձեզ հետ պատահած այդ դէպքը հետևանք չէ զանազան թիւրիմացութիւնների, այլ նախամտածած ծրագրի, որով դումայում և ուպրավայում տիրող կուսակցութիւնը աշխատում է միշտ էլ տիրապետած լինել... Ձեր և մեր հակառակորդների այդ ձգտումը, ցաւակցաբար, իրականութիւն կարող է դառնել այն ժամանակ, երբ դուք կը հրաժարվէք ոչ միայն ձայնաւորի կոչումից, այլ և ձեզ առաջարկված քաղաքագլխի պաշտօնից։ Բագումի դուք միակ մարդն էք, որ կարող էք ստանձնել քաղաքագլխի պաշտօնը յօգուտ ոչ անձնական և ոչ տեղական նեղ ազգայնութեան շահերի, այլ յօգուտ ամբողջ քաղաքի և ռուսաց տէրութեան։ Վաղուց, շատ վաղուց ռուսի արիւնով դնած Բագուն պէտք է դառնար ռուսական քաղաք, և այդ կը լինի այն ժամանակ, երբ դուք, միայն դուք—և ոչ մի ուրիշը—կը լինէք քաղաքային վարչութեան գլուխը...»։

Թէ քաղաքի շահերի տեսակէտից իսկապէս ով աւելի նպատակայարմար քաղաքագլուխ կը լինի, Անտոնով թէ Իրեցկի, մենք այդ չենք կարող ասել. երկուսն էլ ունեն իրանց անցեալ գործունէութիւնը. մէկը ինչպէս 15 տարի շարունակ քաղաքագլխի օգնական. միւսը՝ երկար տարիներ երբեմն յայտնի, այժմ մնանկացած «Դրուժինա» նաւավարային ընկերութեան կառավարիչ։ Երկուսն էլ անծանօթ մարդիկ չեն, ընտրողները լաւ ճանաչում են դրանց... Մենք սակայն այսքանը կասենք միայն, որ քաղաքագլուխ ընտրելու համար, ինչպէս յայտնի է, կայ սահմանած օրէնք, կայ կանոնադրութիւն, որոնց հիման վրա էլ որոշ եղանակով քուէարկվում և ձայնի բազմութեամբ ընտրվում է քաղաքագլուխը։ Մամուլը, և քաղաքի շահերի պաշտպանը կարող են և պարտաւոր են, նախ քան ընտրվելը, մերկացնել տիրող ռէժիմի այլանդակ կողմերը, պարզել իրերի դրութիւնը, դատել, դատափետել այս կամ այն թեկնածուի անձնաւորութիւնը, նոյն իսկ որոշ տեսակէտից թէկուզ «ագիտացիա» անել, բայց «օրինաւոր» ընտրութիւնից յետոյ ձայների բազմութեամբ ընտրվածի դէմ որոգայթներ լարել, յայտնի նպատակով ոտնձգութիւններ անել, այդ աւելի քան պախարակելի է։ Այս առաջին դէպքը չէ...

Ն. Դ.

Էլէօնորա Դուզէն Մարգարիտ Գոտիէին տուեց մի բոլորովին, մեր տեսածներից տարբեր, ընաւորութիւն և դոյն. նրա ստեղծագործութիւնը և ըմբռնումը բոլորովին նոր է. Մարգարիտը իր առաջին երևոյթից մինչև մահը ձեզ համակրելի է։ Այդ համակրանքը գնալով աճում է, մինչև որ դուք նրանով տարվում էք. և որքան ձեր աչքում բարձրանում է այդ կինը, նոյնքան ընկնում է այն հասարակութիւնը, որի ճաշակի և հասկացողութեան զոհ է դառնում Մարգարիտը։ Դուզէի ստեղծագործութեան ոյժը դիւթապէս ազդում է բոլորի վրա։ Երրորդ գործողութեան մէջ Արմանի հօր հետ ունեցած նշանաւոր խօսակցութիւնը Դուզէն կատարեց այնպիսի անկեղծութեամբ և արտագրաւ, որից աւելի լաւ անկարելի էր սպասել նոյն իսկ իրանից—Մարգարիտից։ Աքանչելի էր չորրորդ գործողութեան մէջ Մարգարիտի՝ Արմանի հետ ունեցած առանձնական խօսակցութիւնը, թղթախաղի սենեակում, մանաւանդ այն րոպէին, երբ խանդոտած Արմանը միւս սենեակից կանչում է իր բոլոր ծանօթներին և նրանց ներկայութեամբ ուզում է պատմել Մարգարիտի արարմունքը և ապա ոսկիները գրպանից հանելով՝ շպրտում է Մարգարիտի ոտների տակ։ Այդ ժամանակ գոնատ, յուսահատ Մարգարիտը ոչինչ չէր խօսում, միմիայն չորս անգամ կրկնեց. «Արման, Արման, ինչ ես անում, Արման»... բայց մի այնպիսի սիրա կտրատող վշտով, որ սառսռա անցաւ մեր բոլորիս մարմնի վրայով։

Դուզէն իր տաղանդի գագաթնակէտին հասաւ վերջին գործողութեան մէջ, երբ թոքախտից մաշված, թուլացած, հանգչելու մօտ դրութեան մէջ, մահվան անկողնում ընկած, յանկարծ սենեակն է մտնում Արմանը. այս հանդիպումը, նրա գիրկն ընկնելը, նրան իր կրծքին կարօտագին սեղմելը, այն աչքերը, շարժուածքը՝ ում աչքերից արտասուք թափել չը տուեցին, ում քարացած սիրտ տակն ու վրա չեղաւ։ Իսկ մահը. այդ անկեղծ, խորը սիրով լի, նորից ապրելու, երջանիկ լինելու ցանկութեամբ լցուր տոգորված կնոջ մահը իր սիրելի գրկում, նրա կրծքին ընկած, այդ բնական մահը, դա Դուզէի տաղանդի հրաշալի մօզաիկան էր, արժանի հիացման, յափշտակութեան։

Վարագոյրն իջաւ։ Հասարակութիւնը ճընշված այդ որտակտուր պատկերի տպաւորութեան տակ՝ լուռ էր. լսվեցին թոյլ ծափահարութիւններ. վարագոյրը բարձրացաւ. երևաց Դուզէն, և ահա սկսվեցին ոգևորութեան, հիացման ցոյցեր։ Եօթն անգամ դուրս կանչեցին մեծ արտիստուհուն, օվացիաներին վերջ չը կար. կէս ժամից դատարկվեց թատրոնի դահլիճը և բոլորը ցրվեցին իրանց տները՝ տանելով անջնջելի տպաւորութիւն այդ օրվայ խաղից և տիկին Դուզէից։ Յաջորդ օրը լրագրական ըէցենզէնտները հիացմունքով էին խօսում «մեծ Դուզէի» մասին և ցաւում, որ այդ մեծ բաւականութիւնը գերմանական լեզուով ստանալ չը կարողացան, այլ հասարակութեան մեծամասնութեանը անծանօթ իտալերէն լեզուով։

Երկու օրից Դուզէն տուեց Զուդերմանի «Հայրենի օջախը», ուր կատարում էր Մարթայի դերը։ Ներկայ եղողները նոյն հիացումով և ոգևորութեամբ դուրս եկան թատրոնից, իսկ քննադատներից մի քանիսը խորհուրդ էին տալիս տեղական դերասաններին լաւ ուսումնասիրել այն տիպը, որը այնպիսի բնական ճշդութեամբ կատարեց Դուզէն։ «Դուզէի ներկայացումներից ամենից շատ օգուտը պէտք է իսկապէս ստանան մեր դերասանները—արդեօք նրանց հպարտութիւնը թոյլ կը տայ իրանց՝ մի ուրիշից բան սովորելու, թէ պէտք է մեզ նորից տան այն արուեստական դերասանական ձևերը և շարժուածքները, որոնցից սովորել են մերոնք ժառանգաբար», գրում էր «Leipziger Neuste-Nachrichten»-ի ըէցենզէնտը։

Սակայն Դուզէնի դրամատիքական տաղանդը իր ամբողջութեամբ արտայայտվեց երրորդ և վերջին ներկայացման ժամանակ։ Նա խաղում էր Սարդուի «Ֆեդօրայի» մէջ՝ Ֆեդօրայի դերը, մի դեր, որը շատ քիչ դերասանուհիներ են խաղում դրա անյաղթելի դժուարութիւնների պատճառով։

«Ֆեդօրան» գրել է Սարդուն առանձնապէս Սարա Բերնարի համար. սա միակն է եղել, որ կարողացել է այդ դժուարին և պատասխանատու դերը մինչև վերջը քաջութեամբ և յաղթանակով տանել, սակայն այն մարդիկ, որոնք տեսել են Բերնարին այդ դերի մէջ՝ խոստովանվում էին, որ Դուզէի խաղը աւելի խոր հոգեբանական էր, աւելի յաջորդական և ազդեցիկ, քան Ֆրանսիայի մեծ գեղարուեստագէտինը։

Այստեղ ներկայացված է մի շատ հետաքրքիր, ճիշտաւորված, բարդ դրամատիքական նրբութիւններով ողողված, սիրոյ մէջ անսահման, ատելութեան մէջ անսանձ, վրէժի մէջ ամեն սրբութիւն մոռացող ռուս կնոջ տիպ, որը իր կրքոտ սիրոյ և չափազանց էներգիայի զոհ է դառնում. մի կին, որի գործողութիւնների հետևանքն են միմիայն բեմի վրա տեսնվում և այն հոգեկան ազդեցութիւնները, որոնք զրկում են նրան այս կամ այն անել։ Սա միմիկայի, շարժուածքների, հոգեկան ամենանուրբ և դժուարին արտայայտութիւնների մի բարդ, յաջորդական պատկերների և գործողութիւնների գեղարուեստական խաղ է պահանջում, որի վերջը դերասանուհու ամենաամուր ջղերը անգամ խախտվում են և նա ուժասպառ կարող է լինել հոգեկան այդքան լարված դրութեան ազդեցութեան տակ. որքան դժուար է ուրեմն Դուզէի նման մի ջղային, հիւանդոտ, թոյլ էակի համար այդպիսի մի դեր վերցնել։ Եւ ուղիղ որ ներկայացման վերջը, երբ ոգևորված հասարակութիւնը նրան անթիւ անգամ բեմ էր կանչում, Դուզէն երևում էր բեմի վրա մարմնապէս և հոգեպէս փշրված, ուժասպառ, դէմքը գունատ, աչքերը իրանց սովորական փայլը կորցրած այնպէս, որ մինչև անգամ գլուխ տալ դժուարանում էր։

Հասարակութիւնը երրորդ գործողութիւնից յետոյ նրան նուիրեց մի չքեղ պսակ, իսկ ամեն գործողութիւնից յետոյ աղմկալից ծափահարութիւններ։

Ֆեդօրայով վերջացան Դուզէի ներկայացումները. դրանց տպաւորութիւնը շատ մեծ է. այս ողջ շաբաթ Լայպցիգի համար Դուզէի շաբաթ է. ամեն ոք և ամեն տեղ խօսում է Դուզէի մասին, նրա աչքերի, նրա շրթունքների, հրաշալի պարանոցի, նրա խաղի արուեստական կատարելութեան մասին ընականութեան մէջ։

Լուր է պատում, որ Դուզէն այլ ևս բեմ չէ դուրս գալու. նրա առողջութիւնը խախտված է, և բժիշկների խորհուրդով գնալու է Վենետիկ բնակվելու և իրան նուիրելու է իր միակ դստեր կրթութեան գործին։ Եթէ այս լուրերը ճշմարիտ են, եթէ մեծ արտիստուհին ուզիղ որ ընդմիշտ թողնելու է բեմը, այն ժամանակը կարելի միայն ցաւել, որ թատրոնական աշխարհը կորցնելու է նրա նման մի տաղանդաւոր անձի, որը կարողացաւ մի քանի տարիների ընթացքում ողջ Եւրոպայի կրթված հասարակութեան անկեղծ համակրութիւնը և սէրը գրաւել, նրան ոգևորել, կըրթել, սրտաբուղխ արցունքներ և խիստ ցաւ և մխիթարութիւն պատճառել, նրան տալ այնպիսի անմոռանալի, անմոռանալի րօպէներ, երբ մարդ մոռանում է գոնէ մի քանի րօպէներով կեանքի դառնութիւնները, հոգսերը և կենտրօնանում է մի ուրիշի, իր ընկերոջ, բարեկամի, մի խօսքով տանջվող մարդու ցաւերի և հոգու մէջ։

Ա. Աթանասեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից հաղորդում են, որ Երուսաղէմի Ցարութիւն պատրիարքը դեկտեմբերի 23-ին ճանապարհ ընկաւ դէպի Երուսաղէմ։ Լուր կար, որ Ցարութիւն պատրիարքը Կ. Պոլիս է կանչված հայոց վերաբերեալ գործերի պատճառով։ Բայց ոչ այդ մասին, և ոչ էլ Երուսաղէմի պարտքի մասին, ինչպէս մեզ յայտնի է, Երուսաղէմի պատրիարքը ոչ մի գործ չէ կատարել, և ոչ մի դիմումներ չէ արել Թիւրքաց կառավարութեանը։

—

«Մշակի» խմբագրութիւնը իր պարտքը համարեց յունվարի 15-ին, մի հեռագրով շնորհաւորել Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան օրը։

—

Բագուն մի տարածված սովորութեան նոր ապացոյց է տալիս։ Այդ քաղաքում ապրող Մօսկվայի համալսարանի նախկին սաները, երկու տարի առաջ, Տատեանի տօնախմբութեան օրը, ճաշկերոյթի ժամանակ մի գեղեցիկ մտք էին յղացել՝ համալսարանում մի թոշակաւոր ուսանող պահել, տալով նրան ամսական 30 ռուբլի։ Եւ ահա ստորագրութիւնը կազմվում է, մի չքաւոր ուսանող ընտրվում է թոշակաւոր և ամբողջ երկու տարի նա ստանում է իր թոշակը։ Կարող էր երևակայել խեղճ ուսանողը, որ իր բարերարները կէս ճանապարհի վրա կը թողնեն իրան. սակայն հէնց այդպէս և եղել է։ Ստորագրողների մի մասը, ինչպէս երևում է «Кассій» լրագրի մէջ տպված պ. Անտոնովի նամակից, հրաժարվել է իր տարեկան չնչին տուրքը տալուց։ Բայց մօտենում էր Տատեանի տօնախմբութեան օրը, յունվարի 12-ը և սպասվում էր, որ այդ օրը համալսարանի նախկին հարիւրաւոր ուսանողները կը հաւաքվեն ճաշկերոյթ անելու և այդ առիթով կը յիշեն իրանց հանդիսաւոր խոստումը և կը կատարեն իրանց սրբազան պարտաւորութիւնը։ Եւ ահա Բագուի ռուս լրագրում մի քանի օր չարունակ տպագրվում է հրաւէր նախկին ուսանողներին համախմբվելու յունվարի 12-ին և տօնելու alma mater-ի հիմնարկութեան տարեդարձը. բայց հրաւէրը մնում է «ձայն բարբառոյ յանապատի» և մի հոգի էլ չէ գալիս։ Ինչ պիտի լինի այժմ խեղճ, երեսի վրա ձգած ուսանողի վիճակը։ Առաքինութիւնն այն չէ, որ շամպայնի ազդեցութեան տակ մեծ մեծ խոստումներ անեն, ուրիշներին յուսադրեն. առաքինութիւնը այդ խոստումը կատարելն է։

—

Յունվարի 15-ին, Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան օրը, Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար պ. Իզմայլով քաղաքի կողմից շնորհաւորական հեռագիր է ուղարկել Էջմիածին։ Նոյն օրը, ինչպէս լսեցինք, շնորհաւորական հեռագիրներ են ուղարկվել այլ և այլ հաստատութիւնների կողմից։

—

Յունվարի 16-ին Թիֆլիսի ժողովարանում տեղի ունեցաւ Հրատարակչական ընկերութեան սովորական պարահանդէսը։ Երեկոյեան ժամը 11-ին արդէն ժողովարանի դահլիճում հաւաքված էր Թիֆլիսի ինտելիգենտ հայ հասարակութիւնը։ Դահլիճներից մինում նուագում էր եւրոպական նուագախումբը՝ իսկ միւսում ասիական թառը։ Պարի դահլիճում աչքի էին ընկնում մի քանի պարահանդէսային նորութիւններ.—մի կողմում չինած էր Էյֆելեան աշտարակ՝ զարդարած դրօշակներով, որի տակ խմիչքներ էին ծախում մեր շնորհալի երգչուհի օրիորդ Պապայեան և ուրիշները, իսկ միւս անկիւնում՝ դրած էր մի կիոսկ, որի մէջ մի կողմից քանկօպէկանոց զոցը՝ միւս կողմից ստանում էր մի որ և է իր։ Այդ բոլորը կազմակերպել էր երեկոյթի կառավարչուհին, իշխանուհի Մ. Թումանեան, որը ոչինչ ջանք չէր խնայել երեկոյթը աջող դարձնելու համար։ Պարերը տեւեցին մինչև առաւօտեան ժամը 4-ը։ Ընդհանուր արդիւնք եղել է մօտաւորապէս 1200 ռուբլի։

—

Յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Բալախանից, մի խումբ գործաւորներից, հանգանակված 33 ռ. 60 կ. 2) Նալչիկից, Ռուբէն Կոստանեանից՝ 8 ռ. (մնաց. բաժ.). 3) Աշտարակից, Թորգոմ Նահապետեանից՝ 3 ռ. և Լևոն Թումանեանից 3 ռ. 4) Վաղարշապատից, օր. Եւ. Շամքորեանի միջոցով, 40 ռուբլի, որը գոյացել է դեկտեմբերի 26-ին Արծրունու յիշատակին կայացած գրական երեկոյթից։ Ուրեմն նախկին 1719 ռուբլի 56 կոպէկի հետ միասին այժմ ունենք 1807 ռուբլի 16 կոպէկ։

—

Նկարագրելով Կ. Պոլսի հայոց թատրոնի տխուր վիճակը, «Արեւելք» լրագրի քրոնիկերը՝ նախանձում է Թիֆլիսի հայոց թատրոնին, և գրում է. «Թիֆլիսի հայ դերասանական խումբը կը շարունակէ իր ներկայացումները, որոնք հետզհետէ փայլուն կը դառնան»։ Եւ այդ փայլը կայանում է նրանում, որ մեր թատրոնը քանի գնում դատարկվում է... Կամ գուցէ Կ. պոլսեցիք ենթադրում են, որ տիկին Հրաչեայ կամ նոյն իսկ Պէննեմէճեաններ բաւական են, որ մեր թատրոնը «հետզհետէ փայլուն դառնայ»։

—

Ստացանք. 1) «Շէն թագաւորի աղջիկը» անուանով հեքիաթը, որ գրի է անցկացրել Ս. Քամալեանց։ Հէքիաթը հետաքրքրական է, գրված գրական լեզուով։ Միայն չէ յայտնված առաջաբանի մէջ թէ որ գաւառից է գրի անցկացրած հեքիաթը և ում պատմածից։ Լեզուն թէև թեթև է, բայց խառն է. օրինակ, բացառական հոլովը գործ է ածվում «է» և «ից»։ Գրքոյկի գինն է 25 կոպէկ։ 2) «Երեք պատկեր» գրքոյկը, աշխ. Վ. Փափազեանի, հրատարակութիւն Բագուի «Արօր» տպարանի։ Այդ երեք պատկերները, որոնցից երկուսը մանկական ընթերցանութեան համար են գրված, իսկ երրորդը պարսկական կեանքից է առած, արտատպված են «Աղբիւր» ամսագրից։ Առաջին գրքի գինն է 25 կ., երկրորդինը 5 կոպէկ։

—

Յունվարի 15-ից, «Нов. Время» լրագրի խօսքով, պօստ-հեռագրական շրջաններին կից բացվում են ֆրանսերէն և գերմաներէն լեզուների կուրսեր՝ պօստ հեռագրատան պաշտօնեաների համար։

—

ՇՈՒՇՈՒՅ մեզ հաղորդում են հետեւեալը. «Այսօր, ամսոյս 13-ին, նախագահութեամբ Այվազեան եպիսկոպոսի կայացաւ թեմական դպրոցի հոգաբարձուների ընտրութիւնը։ Ընտրված են հոգաբարձուներ. Ստեփան Իզբաշեանց, բժիշկ Խաչատուր Բահատուրեանց, Ջաւատ-բէգ Իշխանեանց, Իսահակ Թադէոսեանց, Գերասիմ Մելիք-Շահնազարեանց և Մինաս Խունիեանց. իսկ անձնափոխանորդներ՝ Դաւիթ Ներսէսեանց, Գրիգոր Հաղաթեանց, Թալիշ-բէգ Դոլուխանեանց, Համբարձում Տէր-Մարտիրոսեանց, Ալէքսանդր Կաֆիեանց և Կարապետ Շեսեանց։ Պ. Մ. Խունիեանց ընտրված է նոյնպէս գանձապահ»։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Յունվարի 5-ին, Ծննդեան երեկոյեան մի խումբ պարոններ, ուսուցիչների աջակցութեամբ «աւետիս» ման եկան յօգուտ հայոց դպրոցի և հաւաքեցին 160 ռուբլուց աւել։ Նոյն խումբը յունվարի 7-ին պարերեկոյթ տուեց հայոց ուսումնարանի օգտին նոյն ուսումնարանում։ Երեկոյթից զուտ օգուտ մնաց 100 ռուբլի։ Երեկոյթը շատ ուրախ անցաւ, դպրոցը լի էր բազմութիւնով, պարում էին թէ տեղական և թէ եւրոպական պարեր։ Միայն աչքի էր ընկնում ընիկ կաղզուանցի «աղաների» բացակայութիւնը։ Առհասարակ այդ «աղաները» ամեն մի բարենպատակ գործից իրանց հեռու պահելով հանդերձ՝ միայն այն ժամանակ են գործի մէջ խառնվում, երբ հարկաւոր է լինում սրան նրան կեղծ վկայականներ տալ, այս կամ այն տգէտ և անվստահելի անձնաւորութեան կանդիդատութիւնն առաջարկել թէ հոգաբարձութեան, թէ դեպուտատութեան և թէ այլ այդպիսի պաշտօնների համար»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Կիրակի, ամսոյս 9-ին, Գայիանեան դպրոցի դահլիճում, դերասաններ Պարոն-Սարգսեան և Զարչօղլեան, տեղիս թատերասէրների մասնակցութեամբ ներկայացրին «Զոհի փոխարէն զոհ» և «Ընտանեկան փոթորիկ»։ Ներկայացման սկզբին, երկրորդ զանգը տալուց յետոյ, անցնում է կէս ժամ, ոչ ոք չէ ուզում մտածել երրորդ զանգի մասին, թէև արդէն ժամի 9-ն էր։ Բանից դուրս եկաւ, որ դպրոցի աւագ-ուսուցիչը պահանջում էր, որ 25 ռուբլի վճարեն ներկայացման սկզբին, իսկ դերասանները չէին կարողանում վճարել։ Մուտքը մօտաւորապէս եղել է 50 ռուբլի, իսկ ծախսը 70 ռուբլի։ Ինչպէս իմացել ենք, դերասանները առաջարկել են հոգաբարձուներին, որ տոմսակներ ծախելուն օգնեն և $^2/_3$ մասը վերցնեն յօգուտ դպրոցի, իսկ $^1/_3$ մասը ստանան դերասանները։ Բայց թէ ինչու հոգաբարձութիւնը չէ համաձայնվել, այդ մեզ համար անհասկանալի է և զարմանալի։ Փոխանակ աղքատ աշակերտուհիներին հեռացնելու դպրոցից, աւելի լաւ է այդպիսի հանգամանքներից օգտվել և մի քանի աղքատ աշակերտուհիներ աւելի պահել»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ Բարեգործական ընկերութեան վարչութիւնը մեզ խնդրում է տպագրել հետեւեալը. «Նոր տարվայ գիշերը Բարեգործակ. ընկերութեան տեղիս ճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ, յօգուտ նոյն ճիւղի՝ գրական-ձայնական մի երեկոյթ կայացաւ, որին յաջողեցին եւրոպական և հայկական «կլոր» պարերը—պարերգերով։ Տոմսակներից մուտք եղաւ 109 ռ., բուֆետից 83 ռ. 13 կ. սիրողների երգեցիկ խմբից նուէր 5 ռ. 95 կոպ. ընդամենը 198 ռ. 8 կոպ.։ Ծախս՝ ընդամենը 75 ռ. 1 կոպ.։ Զուտ արդիւնք մնում է 123 ռ. 7 կոպ.։ Վարչութիւնս պարտք է համարում հրապարակօրէն շնորհակալութիւն յայտնելու եղբ. Յովհաննէսեաններին, որոնք դահլիճի հետ չը զբաղացան համարեա ամբողջ տունը վարչութեանս տրամադրութեան տակ դնել. պ. Տ. Տօնականեանին իր երկսեռ խմբի հետ, որն անխոնջ աշխատանք գործ դրեց քառաձայն երգեր սովորեցնելու և խումբը կառավարելու. պ. պ. Խ. Դիլանեանին, Ս. Աղաբալեանին և Մառանչեանին, որոնք իրանց եռանդուն մասնակցութեամբ շուք տուին երեկոյթին և առհասարակ այն բոլոր անձանց, որոնք չը խնայեցին իրանց բարոյական աջակցութիւնը այս երեկոյթը գլուխ բերելու համար»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Յունվարի 9-ին սիրողների նախկին խումբը քաղաքային կլուբի դահլիճում ներկայացում տուեց դպրոցների չքաւոր աշակերտների օգտին։ Թատրոնը ամբողջովին լի էր. զուտ արդիւնք 100 ռուբլուց աւելի մնաց։ Ներկայացումը՝ համեմատած առաջինի հետ՝ այս անգամ բաւական աջող անցաւ։ Խաղացին «Ռուզան» ողբերգութիւնը և «Ոսկան Պետրովիչ դժոխքում» վոդեվիլը։ Երևում էր, որ դերակատարները աշխատել էին, որ շատ ուրախալի է։

—

«Մշակի» երկրորդ համարում «Նամակ խմբագրութեան» մէջ մի աղգանուն սխալմամբ տպված է Գրիգորեան, պէտք է լինի Գիրգիդեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

Արտասահմանեան լրագիրները լի են յուզիչ լուրերով այն վտանգաւոր ճգնաժամի մասին, որ տիրում է ներկայումս Սերբիայում։ Ամենից շատ հետաքրքրվում են սերբիական գործերով աւստրիական և ունգարական լրագիրները։ Եթէ հաւատ ընծայենք նրանցից մի քանիսի խօսքերին, Սերբիայի դրութիւնը կատարելապէս յուսահատական, անելանելի է։ Երկրի ֆինանսները այնքան քայքայված են, որ պետութեանը մնանկութիւն է սպառնում։ Ջօրքը արդէն երրորդ ամիսն է, որ ռոճիկ չէ ստանում և այդ պատճառով տրանջում և սպառնում է ապստամբվել։ Բանը այնտեղն է հասել, որ մինչև անգամ Օբրէնովիչների տանը վտանգ է սպառնում և այլն։ Այդ յուզիչ լուրերի հետ կապում էին և Միլան Թագաւորի Վիէննա գալը և հեռագիրների փոխանակութիւնը հայր ու որդու մէջ։

Եւ ահա հեռագիրը լուր բերեց, որ նախկին Միլան Թագաւորը, իր որդու հրաւէրով, գնաց Բելգրադ, չը նայելով որ մի յատուկ օրէնք կար հրատարակված, որի հիման վրա Միլան Թագաւորը իրաւունք չունէր վերադառնալ Սերբիայի մայրաքաղաքը։ Այդ հանգամանքը գրգռեց Սերբիայի քաղաքական կուսակցութիւններին և հասարակական կարծիքը, և դրա հետեւանքն այն էր, որ Գրուիչի մինիստրութիւնը հրաժարական տուեց։

Գրուիչի մինիստրութեան հրաժարականի խընդիրքի մէջ ասված է. «Երէկ ձեր մեծութիւնը բարեհաճեցիք կանչել ինձ և ներքին գործերի մինիստրին, և երկար խօսակցութիւնից յետոյ, բարեհաճեցիք յայտնել, որ գործերի դրութեան մի ելք տալու համար հրաւիրեցիք ձեր օգոստափառ ծնողին և որ նա գալիս է այսօր։ Ձեր մեծութիւնը չը բարեհաճեց մեր խորհուրդները ընդունել՝ հրաժարվել այդ վճռից, որ հակառակ է յատուկ օրէնքին և ի նկատի ունենալով յայտնի տրամադրութիւնը երկրում՝ կարող է ճակատագրական հետեւանքներ ունենալ Սերբիայի և ձեր գահի համար։ Մինիստրութիւնը չէ կարող պատասխանատուութիւն յանձն առնել ձեր այդ վճռողական քայլի համար և խնդրում է հրաժարականն ընդունել։»

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, յունվարի 6-ին

Ձեմ յիշեր ուր կարդացած եմ կէս լուրջ, կէս կատակ նկատողութիւն մը, թէ Պոլսոյ հայերը ժամանակաւ Կովկասի կեանքէն միայն երեք տեղեկութիւն ունէին։ Գիտէին թէ Էջմիածին կաթողիկոս մը ունի, թէ Թիֆլիս քաղաքը կայ, թէ «Մեղու» կը հրատարակէ։ Այս կէս կատակը հիմա գրեթէ սկսած է իրականութիւն ըլլալ։ Մեր թերթերը որչափ հնար է քիչ կը խօսին կովկասեան գործերու վրայ. կովկասեան ո և է թերթի անուն տալ չէ կարելի. ձեր գործերուն վրա ընդարձակօրէն խօսիլ ներելի չէ. Կաթողիկոսի օծումն իսկ միայն քանի մը տողով գրուեցաւ։

Օրացոյցին մէջ գրուած էր. «Ի Հայրապետութեան Վեհափառ Կաթողիկոսի...»։ Եւ ահա այս օրերս կառավարութիւնը սկսած է ժողովել բոլոր օրացոյցները, թէև հրամանը տրուած է կրթական նախարարութեան կողմէ։

Եւ այս պահուն ինչ կընեն Աչըգեան պատրիարք և իր չար ոգին՝ Սիմոն Մագուստ։

Երբ քանի մը տարի առաջ հայերէն թերթ մը չուզեց «ամենապատիւ» տիտղոսը գրել Աչըգեան պատրիարքին, սա թագրիր մը գրելով Բ. Դրան, օրագրին խափանումը պահանջեց, իսկ հիմա, ինչու նստած է անտարբեր։

Պատրիարքի քաղաքականութեան ոգին ըմբռնելու, ժողովներու ընթացքը բացատրելու, ամեն խնդրի էութիւնը դիւրաւ հասկնալու համար կարեւոր է ամփոփ պատկերով մը ներկայացնել Աչըգեան Պատրիարքի պաշտօնավարութեան օրէն մինչև հիմա պատահած դէպքերու մէկ նկարագիրը։ Ուստի առ այժմ բաւական է ըսել, թէ Պատրիարքը ապէն ամէն բարիք թիւրքերու հաճոյ ըլլալու ուղղութեան մէջ կը փնտռէ։ Մագուստ Սիմոն պէյ, որ այսօր բացարձակապէս կիշխէ Պատրիարքին վրա, այնքան բազմաթիւ շահեր ունի թիւրքերէ, որ հարկադրված է ամեն բանի մէջ կատարել թիւրքերու պահանջումները։

Աւելցնենք, թէ Աչըգեան Պատրիարք միշտ կերազէ ստանալ «Օսմանիէի» առաջին պատուանշանը, ինչ որ շատ տղայական պիտի երևի ձեզ, բայց իրողութիւն է։ Երուսաղէմի Ցարութիւն պատրիարքին «Օսմանիէ» ստանալը, սոսկալի հարուած մը եղած է պատրիարքին։

Իսկ Սիմոն պէյ իր նիւթական շահերուն մէջ սրտագին կը տենչայ փաշայութեան տիտղոսն ու աստիճանը ստանալու, իբր գին իր մատուցած ծառայութեան։

Այս երկու անձնաւորութիւնները անտարբեր ոգիով գործադիր կըլլան ամէն հրամաններուն։ Ահա վերջին օրինակ մը, որ չեմ կարծեր թէ շատ ծանօթ ըլլայ։

Անշուշտ գիտէք թէ Պոլիս 40-էն աւելի եկեղեցի ունի. ասոնք ամենքն ալ գրեթէ ապաստարան են եպիսկոպոսներու և վարդապետներու, որք մայրաքաղաքը կը գտնուին։ Սակայն շատ անգամ մէկ եկեղեցիին քարոզիչ եպիսկոպոսը կամ վարդապետը ուրիշ եկեղեցի կերթայ պատարագի, քարոզի, մեռելի, հարսանիքի։ Եւ ահա վերջերս օր մը պատրիարքը չրջաբերականով մը արգիլեց այս տեղափոխութիւնները։ Բաւական չէր այս։ Եւ ահա պատուէր տուաւ, որ օրթոթերուն մէջ չը հրատարակուին նախապէս, եպիսկոպոսներու պատարագ ընելը կամ քարոզ տալը։

Այս արգելքներու շարժառիթը գաղտնիք մնաց, զանազան մեկնութիւններ տուին, բայց ստոյգ պատճառը կրցինք վերջապէս գիտնալ։ Կառավարութիւնը տեսնելով որ, երբ քարոզիչ մը ուրիշ եկեղեցի մը կերթայ, հոն շատ բազմութիւն կը լեցվի, տեսնելով նաև որ եպիսկոպոսի մը, կամ վարդապետի մը իր եղած եկեղեցիին մէջ պատարագ ընելը կամ քարոզ տալը օրագիրներու մէջ երբ ծանուցուի, ուրիշ թաղերէ շատ բազմութիւն կերթայ հոն, ուստի եկեղեցիներու մէջ բազմութիւն չը հաւաքուելու համար Պատրիարքէն պահանջուեցաւ արգիլել քարոզիչներու տեղափոխութիւնը, պատարագի և քարոզի յայտարարութեանց

նախապէս ծանուցուիլը։ Պատրիարքը հնազանդեցաւ։

Երեք տարիէ ի վեր Պատրիարքը այդ ուղղութեան կը հետեի. իսկ այդ նպաստաւոր պայման մըն է նոյն իսկ Պատրիարքին ու Սիմոն պէյին։

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Գերմանական կայսրի գահական ճառի մէջ շատ մեայլ գոյներով է նկարագրված Պրուսիայի ֆինանսական դրութիւնը։ Անցեալ տարվայ բիւջէյը փակվել է 25 միլիոն դէֆիցիտով, իսկ այս տարվայ բիւջէյը, չը նայելով ֆինանսական վարչութեան ջանքերին կրճատել ծախսերը, ոչինչ լաւ բան չէ խոստանում։

—«Köln. Zeit.» լրագիրը տպել է մի յօդուած «Ռուսաց առևտրական դաշնագիրը և գիւղատնտեսութիւն» վերնագրով, որի մէջ, ի միջի այլոց, ասում է հետևեալը. «Յայտնի գիւղատնտեսական շրջաններում համարեա անվիճելի փաստ են համարում, որ Ռուսաստանի հետ առևտրական դաշնագիր կապելու պատճառով սաստիկ կը վնասվի գիւղատնտեսութիւնը Գերմանիայում։ Բայց այդ ենթադրութիւնները և եզրակացութիւնները անհիմն են։ Յայտնի է, ի հարկէ, որ Ռուսաստանում հացի բերքը աւելի է, քան թէ դա հարկաւոր է երկրի սեփական պահանջների համար, այդ պատճառով էլ Ռուսաստանը պէտք է աշխատի աւելորդ հացը ծախել և եթէ բնական չուկան փակված կը լինի նրա առաջ, նա ստիպված կը լինի իր հացի աւելորդը եւրոպական չուկաներն ուղարկել, որպէս զի իզուր չը կորչի։ Այդ պատճառով հացի գները կը պակասեն և դա իսկոյն կազդի գիւղատնտեսութեան վրա։ Գերմանական գիւղատնտեսութիւնը հէնց վնասվում է մաքսային պատերազմից և հացի գնի ընկնելուց»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրժէյը «Новое Время» լրագրում հետևեալ վայրենի դէպքն է պատմում։ Նովոլիրկովան գաւառի Սեմէոնովկա աւանում, նոր տարվայ ծոներին քէֆ էին անում Բ. և Մ. վաճառականները, որոնցից առաջինը 80 բուրլով ծախեց վերջինի վրա իր մաղերը։ Ցանձնելով Բ-ին այդ գումարը, Մ. վաճառականը, տեղական օրկէստրի ներդաշնակութեամբ, սկսեց խուզել Բ.-ի գլխի մաղերը և մօրուքը, ոչխարի պէս խուզեց նրան, բայց ոչ կատարեալապէս, այլ տեղ տեղ, թողնելով գլխի և մօրուքի վրա մաղերի խառնիխուռն փունջեր։ Այդ անցքը Սեմէոնովկում ծիծաղ և սրամիտ խօսակցութիւնների առարկայ դարձաւ։

*
* *

Գինետուն են գնում երեք մուժիկներ. երկուսը դրանցից փող ունեն, երրորդը չունի։ «Վնաս չունի, ասում են փողաւոր մուժիկները անփողին, մենք քեզ, եղբայր, կը հիւրասիրենք, միայն մի պայմանով. թոյլ տուր մեզ խանձել քո մօրուքը։ Ասելն ու կատարելը մէկ եղաւ։ Լուցկին չրխկացրին և մօտեցրին մուժիկի մօրուքին։ Մօրուքը մի ակնթարթում ճռճռաց։ Ճռճռում է, բայց չէ վառվում։ Երևում է շատ կոշտ է մուժիկի մօրուքի մազը։ «Էհ, եղբայր, մօրուքդ մօրուք չէ, այլ թաղիք։ Թոյլ տուր, խնդրում ենք, նաֆթ ածել վրան»։ Անփող մուժիկը, խմելու յոյսով, նաֆթին էլ է համաձայնվում։ Մօրուքի վրա նաֆթ ածեցին և վառած լուցկին մօտեցրին։ Մօրուքը չոր խոտի նման բռնկվեց և այնպիսի արագութեամբ, որ մուժիկները վախեցած չը կարողացան հանգցնել։ Թշուառականի ամբողջ դէմքն այրվեց՝ մօրուքը, մաղերը, յօնքերը և արտանունքները։ Մուժիկը հառաչանք արձակեց և գետին ընկաւ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունվարի։ Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրօվնա յունվարի 12-ին նշանադրվեց Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչի հետ։ —Սենատոր Շամշին արձակված է իր պաշտօնից և նրա տեղ նշանակված է սենատոր Գօրեմիկին արդարադատութեան մինիստրի օգնականի իրաւունքներով։ Սենատի առաջին բաժնի օրէր-պրոկուրոր Բուտկովսկիյ նշանակված է արդարադատութեան մինիստրի օգնական։

ՀՌՕՄ, 14 յունվարի։ Կազիմիր Պէրիէի կարգադրութեան համաձայն, իտալական դեսպանին վճարվեց 420,000 ֆրանկ Էդ Մօրտում տեղի ունեցած ջարդից վնաս կրած իտալացիներին վարձատրելու համար։

ԲԵԼԳՐԱԴ, 14 յունվարի։ Գրուիչի մինիստրութեան հրաժարականի մասին տրված խնդիրքի մէջ ասված է. «Երէկ ձեր մեծութիւնը բարեհաճեցիք կանչել ինձ և ներքին գործերի մինիստրին և երկար խօսակցութիւնից յետոյ, բարեհաճեցիք յայտնել, որ գործերի դրութիւնը կարգադրելու համար հրաւիրեցիք ձեր օգնստափառ ծնողին և որ նա գալիս է այսօր։ Ձեր մեծութիւնը չը բարեհաճեցիք ընդունել մեր խորհուրդները՝ հրաժարվել այդ վճռից, որը հակառակ է յատուկ օրէնքին. և, ի նկատի ունենալով մեր երկրում թագաւորող ակնյայտնի տրամադրութիւնը, կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ Սերբիայի և ձեր գահի համար։ Ուշադրութեան առնելով, որ երկրի քաղաքական դրութիւնը կատարելապէս պարզ է և պետական գործերն ընթանում են սահմանադրութեան համաձայն, որ բացի ձեր մեծութիւնից՝ կառավարութեան և ժողովրդի ներկայացուցչութեան հետ միասին, ուրիշ ոչ ոք չէ կարող աղդել պետական գործերի ընթացքի վրա, մինիստրութիւնը չէ կարող պատասխանատուութիւն յանձն առնել ձեր վճռական քայլի համար և խնդրում է հրաժարականն ընդունել»։

ՍՕՖԻԱ, 15 յունվարի։ Սկսվեց Իվանով եղբայրների դատը, որոնք մեղադրվում են Կօբուրգեան պրինցի դէմ դաւադրութիւն կազմելու մէջ։ Պրոկուրորը մահվան պատիժ է պահանջում։

ՊԱՐԻԶ, 15 յունվարի։ Բէգանցինի եղբայրը Դահոմէի թագաւոր է հրատարակված՝ Ֆրանսիայի հովանաւորութեան տակ։

ՀՌՕՄ, 15 յունվարի։ Սիցիլիայում գործերի դրութիւնը գնալով բարւոքվում է և ապահովութիւնը վերականգնվում։ Յեղափոխական ընկերակցութիւնների զինաթափութիւնը և փակումը շարունակվում է առանց դժուարութիւնների։

ԲԵԼԳՐԱԴ, 15 յունվարի։ Քաղաքում կատարեալ հանգստութիւն է տիրում. թագաւոր-հայրը ոչ մի տեղ չէ երևում. նա միայն այցելեց միտրոպոլիտ Միխայիլին։ Հաստատ լուրեր են պատում, որ շուտով կը դայ և մայր-թագուհին։

ԲԵՐԼԻՆ, 15 յունվարի։ Այսօր առաւօտեան Բիսմարկ Համբուրգից ճանապարհ ընկաւ և կէսօրից յետոյ 1 ժամին պսակներով զարդարված գնացքով Բերլին հասաւ։ Կայարանում իշխանին դիմաւորեցին և սրտանց ողջունեցին կայսրի եղբայր Հէնրիխ և շատ պաշտօնատար անձինք. հասարակութիւնը ամենափառաւոր ընդունելութիւն ցոյց տուեց իշխանին. նրա կառքի մէջ ծաղիկներ էին գցում։ Պալատը գալուց յետոյ, Բիսմարկ ընդունեց պատուաւոր պահնակախումբը և սենեակները մտնելու ժամանակ, սիրալիր ողջոյններով ընդունվեց կայսերական զոյգի կողմից։ Նախաճաշիկը միայն երեք հոգու համար էր պատրաստված։ Մի փոքր յետոյ, կայսերական զոյգը Բիսմարկի հետ միասին դուրս եկաւ պատշգամբի վրա և ցոյցերի առարկայ էր ազգաբնակութեան կողմից։ Պարլամէնտում և պրուսական սէյմում ողևորված ճառեր արտասանվեցին օրվայ անցքի առիթով։ Իշխան Բիսմարկ մէկ կառքում կայսրի հետ դուրս եկաւ 7 ժ. 10 րոպէին պալատից՝ պատուաւոր պահնակախմբի առաջընթացութեամբ. ժողովրդի խմբերը ողջունում էին նրան ողևորված բացագանչութիւններով. շատ մներ չքեղ կերպով լուսաւորված էին։ Եօթ և կէս ժամին երկաթուղին շարժվեց կայարանից։ Կայսրը ճանապարհ գցեց իշխանին մինչև վագոնը, սրտակցութեամբ սեղմեց նրա ձեռքը և մի քանի անգամ գրկեց նրան։ Երբ իշխանը վագոն մտաւ, կայսրը մի քանի խօսք ասաց կոմս Հերբէրտ Բիսմարկին, յետոյ դիմեց կրկին իշխանին, որ գլխաբաց կանգնած էր պատուհանի մօտ։ Հասարակութիւնը ողջունում է կայսրին և իշխանին, ողևորված «Hoch»-ով և երգում էր Deutschland Ueber Alles. գնացքի հեռանալուց յետոյ, կրկին ջերմ ցոյցեր եղան։ Իշխանը ժպտում և սիրով գլուխ էր տալիս։ Իշխան Բիսմարկի հետ միասին ճանապարհ ընկաւ կոմս Հերբէրտ և Վիլհելմ և բժիշկ Դիվէնինգեր։ Երկաթուղու վագոնը լցված էր ծաղիկներով։ Կայսրը հեռացաւ կայարանից, «Hoch» աղաղակների ուղեկցութեամբ։

ԲԵԼԳՐԱԴ, 15 յունվարի։ Առաւելապէս ուսանողներից բաղկացած ամբոխը անցաւ պալատի առջև «կեցցէ սահմանադրութիւն» աղաղակելով։ Հեծելազօր ժանդարմները քշեցին ցոյց անողներին։ Ամբոխը ցրվեց «կեցցէ սահմանադրութիւնը և ժողովրդական ներկայացուցիչները» աղաղակներով։ Քաղաքում զիշերապահ գնդեր են շրջում։

ԼՕՆԴՕՆ, 15 յունվարի։ Կայիրէից հեռագրում են, որ լորդ Կրիմէրի ստիպողական առաջադրութիւնների պատճառով, խէդիվը հրաման արձակեց, որի մէջ նա գովում է թէ զօրքը, և թէ բրիտանական ու եգիպտական օֆիցերներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի։ Թագաւոր կայսրը հիւանդացաւ սաստիկ ինֆլուէնցայով՝ չնչափողի ճիւղերի զգալի կատարրով, բրօնխիտով և աջ թոքի ներքին մասի բորբոքումով։ Տաքութիւնը հասնում է զիշերը մինչև 39°։

ԲԵԼԳՐԱԴ, 17 յունվարի։ Կառավարչական շրջաններին մօտ անձինք հաստատում են, որ Միլանը շուտով կը հեռանայ։ Զը նայելով դրան, հաստատ լուր է տարածված, որ իբր Ալէքսանդր թագաւորը երկարատև ճանապարհորդութեան կը ձեռնարկի, խնամակալ թողնելով իր հօրը։ Խօսակցութիւնների շատ առիթ տուեց Միլանի՝ ուսանողական պարահանդէսի այցելութիւնը։—Թագաւորի հրամանով աղատատամիտ մինիստրների դէմ եղած դատը վերջացրած է. նրանց ներումն է շնորհված։

ՊԱՐԻԶ, 17 յունվարի։ Պատգամաւոր Կլովիս Գիւշ պատգամաւորների ժողովին հարցապնդում արաբ անարխիստների կալանաւորումների մասին և պախարակում էր կառավարութիւնը նրա գործողութեան եղանակի մասին։ Մինիստր Ռէյնալի և պատգամաւոր Շոդէի ճառերից յետոյ, ձախակողմից աղաղակներ լսվեցին՝ «կեցցէ կոմունա»։ Այդ աղաղակի համար պատգամաւորների ժողովը վճռեց արտաքսել պատգամաւոր Տավրիէին. սոցիալիստները բողոքեցին։ Տավրիէ հրաժարվեց դուրս գնալ։ Այն ժամանակ բոլոր պատգամաւորները հեռացան, բացի Տավրիէից և մօտ 30 սոցիալիստներից։ Բուրբոնեան պալատի զինուորական կոմենդանտը մտաւ դահլիճը զինուորներով և ստիպեց Տավրիէին և մնացած սոցիալիստներին դուրս գալ։ Պատգամաւորների ժողովը հաւանութիւն տուեց կառավարութեան գործողութիւններին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունվարի 14-ին

Լօնդոնի վրա	10 ֆունտ արժէ	92 ր.	35 կ.
Բերլին վրա	100 մարկ —	42 ր.	20 »
Պարիզի վրա	100 ֆրանկ —	36 »	65 »
Ոսկի	— — արժէ	7 »	40 »
Մաքսայի կուպօններ	—	148 »	— »
Արծաթ	— — —	— »	— »
Բօրսային դիսկօնտներ	—	5 »	7 »
Պետ. բանկի 5% տօմս	1 շրջանի	103 »	25 »
— — — —	2-րդ	103 »	— »
5% ոսկեայ ընկնտա		159 »	— »
4% ոսկեայ փոխառութիւն		95 »	— »
Արևելեան 5% փոխառ.	1-ին շրջ.	— »	— »
— — —	2-րդ —	101 »	75 »
— — —	3-րդ —	102 »	— »
— — —	4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.		241 »	— »
— — երկրորդ —		225 »	— »
Պետական երկաթուղային ընկնտա.		102⅝ »	— »
4½ ընկնտա		— »	— »
4% ներքին փոխառութեան		94⅞ »	— »
5% դրաս. թղթ. ազն. կալ. բանկի		101⅛ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. դրաս. թղթ. — —		191 »	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.		99⅛ »	— »
4½% դրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.		152 »	— »
— — — թղթադ.		100 »	75 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաներ.		101 »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		100⅞ »	— »
Օդէսայի — —		101 »	— »
Թիֆլիսի — —		— »	— »
Դրաս. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.		— »	— »
— — Բուխարայի —		— »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ“

Աշխատութիւն ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ։

Գինն է 1 բուբլի։ Ծախվում է Թիֆլիսում կենտրօնական գրավաճառանոցում, և Յովհաննէս Տէր-Սարգսեանցի մագազինում։ Դվօրցօվայա փողոցի վրա, Բագու „Արօր“ տպարանում։

(№ 6) 1—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ

Ութերորդ գիրքը։ Գրքի գինն է 50 կոպ., վաճառվում է „կենտրօնական գրավաճառանոցում“ և մեզ մօտ։

Շուտով մամուլի տակ կը մտնի մեր ժողովածուի Տասներորդ գիրքը։ Զեռնհաս անձանց խնդրում ենք ուղարկել մեզ հետևեալ նիւթերը.—Հեքիաթներ. ժող. երգեր. Առածներ. Հանելուկներ. Արգելասօսութիւններ. Անէծքներ. Օրհնութիւններ. Երդումներ. Աղօթքներ. Քաղաքաշական խօսքեր. Մանկական խաղեր. Ժողովրդական բառեր. Ոճեր. Դարձուածներ, և այլն։ Այդ աւանդութիւնները պէտք է գրել բուն տեղական բարբառով։

Մեր հասցէն՝ Тифлисъ, Городская Управа. Տիգրան Նաւասարդեանց։

(№ 6) 1—3

ԵՐԵՒԱՆՈՒՄ ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ԴԵՂԱՏԱՆ ՊԱՀԵՍՏԻՍ գիրքը

մեծացնելով, ընդունում եմ պատուէրներ ԴԵՂԵՐԻ և ԿՈՍՄԵՏԻԿԱՆԵՐԻ։ Դեղագործներին և բժիշկներին գիջում։

Դիմել՝ ЭРИВАНЬ, новый аптекарскій магазинъ Александра Никитича Акопьянца. ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

№ 15 (և.) 7—10

Նոյեմբերի 1-ից կը սաացվի ՊԱՍՏԵՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԲՐՈՒՍՍԱՅԻ ԲՈՒԺՈՒԺԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն յայտնի է ամբողջ կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով։ Սերմը կը սաացվի ուղղակի յայտնի „էկօնոմիտես“ ֆիրմայից։ Դնել ցանկացողները կարող են դիմել ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐԻՆ, Բաթումում, Թիֆլիսում, Բագվում. Նուխում Աղա-Մուսա Մահմէդովին.

Այս հասցէով. Бр. Мнацаканянцъ, Тифлисъ, կամ Баку, կամ Батумъ.

(և. շ.) 16—32

ԲԱՑՎԱԾ Է 1894 ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XII ՏԱՐԻ „ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱՂ“ ՏԱՐԻ V

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԵՆ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ, ԾՐԱԳՐՈՎ ԵՒ ՀԱՅ ՑԱՅՏՆԻ ԳՐԱԿԱՆ ՈՅԺԵՐԻ ՄԱՍՆԿՑՈՒԹԵԱՄԲ.

„Աղբիւրը“ լոյս է տեսնում ամիսը մի անգամ 2—3 թերթ, տարեկան 12 №№, իսկ „Տարաղը“ շաբաթը մի անգամ, կիրակի օրերը 1—2 թերթ, տարեկան 50 №№, „Աղբիւրը և Տարաղը“ 1894 թուականից լոյս են տեսնում մեր անմիջական խմբագրութեամբ և հրատարակութեամբ։

Յունվարի 16-ից կը սկսեն կանոնաւոր լոյս տեսնել „Տարաղի“ 1894 թ. №№, իսկ „Աղբիւրի“ 1894 թ. № 1 լոյս կը տեսնի յունվարի 25-ին։ Տպագրվում է և „Աղբիւրի“ 1893 թ. № 12-ը, որ կուղարկվի բաժանորդներին մինչև հինգ օրը։

„Աղբիւրի“ տարեկան գինը (առանց պրէմիաների) 3 ր. է, իսկ „Տարաղինը“ (առանց պրէմիաների) 6 ր։

2—5

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մերթին դեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական զորձիքների, բացված է Կուկիայում, Վօրոնցօվի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ։

(№ 67) 58—100 (և. շ.)

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Января 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.